վայտաւորք հարկանէին զնա և ասէին՝ «Ծամեա եւ կուլ տուր»· եւ Մելքիսէթն թէպէտ եւ ոչ կամէր, սակայն ի վտանգէն անճար մնացեալ, ծամեաց եւ եկուլ: Եւ ապա աղաղակեաց մուռնեփին, թէ կատարեցաւ հրամանն թագաւորին ի վերայ Խալիֆային, զի զմիսն իւր ծամեաց եւ եկուլ» (Դաւր· Ժէ, 208):

Աւելացնենք խոկոյն, որ թէեւ այսքան դառնութիւնների ու նեղութիւնների հետ էր կապուած կաթողիկոսութիւնը, բայց եւ այնպէս դարձեալ գտնւում էին եկեղեցականներ, անպիտան եւ վատամոլ եկեղեցականներ, որոնք տենչում էին դրաւել այդ աթոռը, կանդ չառնելով եւ ո՛չ մէկ միջոցի առջեւ: Նրանք պայքարի էին մտնում, կաշառքներ ու նուէրներ էին տալիս, մատնութիւններ էին անում— միայն թէ իրենց տրուի կաթողիկոսանալու իրաւունքը: Բացատրութիւնը պարզ է: Ամէնից առաջ՝ աթոռի հեղինակութիւնն էր դրաւում մարդկանց, որը կարող էր գոհացում տալ փառամոլ հոգեւորականների վատասիրական տենչանքներին: Երկրորդ, որ եւ ամէնից գլխաւորն է, կաթողիկոսութիւնը լինելով հարկահաւաքութեան նման մի պաշտօն, չափազանց շահաւէտ մէկ աղբիւր կարող էր լինել վատ մարդկանց ձեռքում — անձնական հարստութիւններ դիզելու տեսակէտից:

Միաժամանակ մի քանի կաթողիկոսներ ունենալու մէկ պատճառն էլ սա՛ էր, աթոռի «դրաչութիւնը»: Փառամոլ եւ արծաթասէր մարդիկ դրամով գնում էին երկրի տէրերից էջմիածնի աթոռը, նրան ծառայեցնելով այնուհետեւ իրենց վատ նպատակների համար:

Օրինակի համար մէկ Սահակ Դ· կաթողիկոս, որը ո՛չ մի արժանիք չունէր կաթողիկոս դառնալու համար, բայց դառնում է, որովհետեւ նախ՝ Մելքիսէթ կաթողիկոսի եղբօրորդին էր, երկրորդ՝ որ փառամոլ էր, ագահ եւ հարուստ: Ու երբ Պարսից հալածանքներից նեղուած՝ նա փախչում է Օսմանեան Հայաստան եւ էջմիածնում կաթողիկոս են ընտրում Մովսէս Սիւնեցու նման արժանաւոր մէկին, սա օր ու գիշեր տանջւում է կաթողիկոսութեան մարմաջով եւ սկսում մի անպատիւ պայքար, գլխաւորապէս տաճիկ կառավարութեան միջոցով: Տաճկահայ ժողովուրդը խնդրում աղաչում է· «Մի՛ մատներ զտառապեալ ազգս Հայոց ի բերան այլազգի բռնաւորաց եւ մարդադէմ գազանաց»: Անգամ խոստանում է նրան տաճկահայ քաղաքներից, թեմերից, վանքերից որն ուզում է, հետն էլ տարեկան 500 դահեկան էջմիածնի կաթողիկոսի կողմից — մինչեւ իր մահը: Բայց ապարդիւն:

Միաբանած ինչ որ բախտախնդիր Պօղոս վարդապետի հետ՝ նա դիմում է տաճիկ կառավարութեան, խոստանալով մտցնել պետական գանձարանը տարեկան 10,000 դահեկան, եթէ իրեն յանձնուի էջմիածնի կաթողիկոսութիւնը: Ժողովուրդն էլ, զայրանալով այդպիսի ազգավնաս քայլից, իր կողմից մի խնդիր է ներկայացնում մեծ վէզիրին, աղերսելով· «Մի՛ մատնեսցես զազգատ եւ զտառապեալ ժողովուրդս ի ձեռն դոցա (— Սահակի եւ Պօղոսի մասին է խօսքը — Ի·), զի զոքա վասն փառամոլութեան եւ ագահութեան իւրեանց մատնեն զողորմելի ոխթն ի ներքոյ ծանր հարկի»: Եւ աւելի մեծ եկամուտ — տարեկան 20,000 դահեկան — խոստանալով գանձարանին, հաղիւ փակում են խնդիրը1):

Հասկանալի է, թէ այս ամէնից յետոյ, ո՛րքան անչքացած պիտի լինէր էջմիածնի եւ ո՛րքան ընկած, վարկաբեկուած աթոռի հեղինակութիւնը: Կաթողիկոսները, մեծ մասամբ, կաթողիկոսներ չէին, այլ Լէօի ասածին պէս՝ «Վեղարաւոր խաներ», որոնք սովորաբար կառավարութեան կամ զանազան խաների վրայ յենուած, նրանց պաշտօնեաների հետ միասին շրջում էին ժողովրդի մէջ, եւ կեղեքում, հարբուսահարում ամէնքին:

Դրա հետ միասին՝ յետին աղքատութեան էր հասել էջմիածնի վանքը, որի գեղեցիկ նըկարագրութիւնը տալիս է ականատես Առաքել վարդապետը·—

«Աստուածաբնակ սուրբ աթոռս ամենեւիմբ ունայնացեալ էր ի ստացուածոց եւ կողոպտեալ ի զարդուց: Ոչ գիրք — զի ոչ էր անդ ժամասել եւ կամ ընթերցումն· ոչ զգեստ եւ շուրջառ — զի ոչ էր ժամակարգութիւն եւ պատարագ· մինչ զի Քրիստոսի իմման տեղն եւս սուրբ սեղանն եւս ոչ ունէին ծածկոց: Ոչ կան-

1) Դաւրիժ· Գլ· Ի·